



ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ

ՄԱՐԶԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԿԱՆ

ՇԱԲԱԾԱԾԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



22

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌՎՄ

ԵՍ ԵՄ
ԵՆՆԱՆ
ՏՈՒՐԻՅ

1. Կարողիկ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հոռոմ: Առաջին վիզամենայի բաժանորդագիւնն է մեկ մեծիս անոնց հաւեսը որ ի Կ. Պոլիս՝ Կարողիկոսարանի մեջ, իսկ ի գաւառս՝ Եպիկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մեջ կ'ազգեն բաժանորդագրուիչ: Ուղղակի Հոռոմ ղրկեցու հաւեսը՝ Չորս (4) փրակ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանիք վերջնականապէս պիտի ճշտուին: — Մեկ թիւը՝ մեկ դանդիան է:
2. Արձագանգը կը հրատարակուի Շաբաթ օրերը:
3. Խնքագրութիւնս պատրաստեալ չէ անպատճառ կամ նոյնութեանք հրատարակեցու իրեն ղրկուած ո՛ր եւ է յօդուած:
4. Ատորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:
5. Նախակ եւ յօդուածներ կը ղրկուին ուղղակի՝ խմբագրութեան:
6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
7. Ծանուցեանց հաւեսը մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



Ստորագրեալ որ ղրկուած թիւերն բաժանորդներէ ոմանց յետք կանանադադես ղեն հաւելի. կը խորհրդեն որ բաժանորդ հաճին ծանուցանել ճշտի- որպէսզի դարձեալ ղրկուին իրենց պահած թիւերն:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ


Առաջին Տարի

18 Նոյեմբեր 1911

Թիւ 22.

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՍԻՆՆՆՈՒՄ

Ի ՀՈՌՈՎՄ



Սիննոդոսս կանոնաւորապէս կը շարունակէ իւր նիստերը և կը յառաջացնէ իր գործերը: Շուրջ տասն և հինգ օրէ ի վեր է որ յոճախակի գումարուած Համագումար ժողովներու մէջ զբաղած էր Նուիրապետական կարգաց վրայ մանրախոյզ և ամենակարեւոր քննութեամբ, որ և կը կազմէ: Սինոդական Գործոց երկրորդ Տիտղոսը: Զայտ վճռելու համար է ուրիմն որ Սրբազան Հարք Սինոդական Երրորդ Հանգիստուոր Նիստը գումարեցին անցեալ Կիրակի օր, 12 Նոյեմբերի Սինոդականաց թիւը նոր յաւելում մի ևս կրած էր, հասած ըլլալով ի Հոռմ, ինչպէս յառաջագոյն ծանուցինք, Արհիապ. Անդրեաս Եպ. Չէլէպեան, վիճակաւոր Տիգրանակերտի, որով և Հարք կը կազմէին հիմա պատկառելի թիւն տառնելին

Սինդականաց: Հակառակ գիտութեամբ թերագրութիւններու յիշաւի մեծապէս միախառնական երեւոյթ մըն է Սինդական Հայերուն համաշունչ համախորհուրդ միութիւնը, սիրալիր համաձայնութիւնն, ստուգելով Քրիստոսի Տեառն մերոյ վերջին ընթրեաց մէջ իւր երկնաւոր Հօրը մատուցած աստուածային աղօթքին վսեմ իմաստը թէ՛ « Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն ք », որով հտուրն լինձ. զի եղիցին մի՛ որպէս և մեք մի եմք »: Բարի նախագուշակ գրաւական մըն է այդ՝ ապագայ յաջողութեանց մեր Հասարակութեան:

Նիստն յառաջեց, ժամը 8ին, Զայնաւոր Պատարագն հանգիսապէս երգուած՝ Կարնոյ Վիճակաւոր Արհի. Յովսէփ Եպ. Մեքիսեղեկեանէ, առաջիկայութեամբ Ամենապ. և Գերերջ. Կաթողիկոս-Պատրիարք Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեանի և համօրէն Սինդական Հայերու. զեկեղեցին կը լեցնէր նոյնպէս բարեպաշտօրէն խոնուած ժողովրդեան բազմազան ամբոխը:

Զայնաւորն երբ աւարտեցաւ, Սիւնհոգոսին Ամենապ. Գահերէցը Դատուն մէջ կատարեց սովորական մաղթանքներն, հայցելու համար Հոգւոյն Սրբոյ երկնաւոր ազգեցութիւնն և օգնականութիւնը. երգուեցան սաղմոսներն, շարականներն ու կարգացուեցաւ Ս. Աւետարանն ըստ պատշաճի. ապա Հարք զգեցնելով Հայրապետական զարդերն, անցան ժողովըրդեան մէջէն և գնացին բազմեցան եկեղեցւոյն միջավայրը գրաւող Սինդական Աթոռներուն վրայ:

Եւ ահա յամպիտն կը բարձրանար Դոմինիկեան կրօնաւոր Հ. Անտոնինոս Սալվաթի և կը սկսէր պերճախօս քարոզ մը, որոյ նիւթը կը կազմէր Նաւիրապետութեան կարգաւոր կազմակերպութեան կարեւորութիւնն և օգուտները: Շնորհաւորութիւններ ու մաղթանքներ կը ներկայացնէր այս նշանաւոր Սիւնհոգոսի Հայ Կաթողիկէից ի Հռոմ, Դոմինիկեանց Կարգին կողմանէ, որ նշանաբան ունենալով *անտոնիանոս* ը, բնաւ զայն ի դերձ չհանեց, նոյն լոկ հեղմամբ արեան: Այս Սիւնհոգոսը ևս առաւել սերտիւ պիտի զօգէ հայ ազգը Քրիստոսի Փոխանորդին անսասան Աթոռոյն, գումարուելով Մարտիրոսաց Բազաքին մէջ: Պատմական մեծ գէպը մը պիտի մնայ նոյն Սիւնհոգոսը Ս. Եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ, յայտնելով ձեռամբնուն անվիճելի ուղղափառութիւնը ի վարդապետականո, ձեռ սկզբունքներուն անկեղծութիւնն ու ապահովութիւնն ի բարեկարգականս, ի կատարեալ ներգաշնակութեան Կաթողիկէութեան կենդրոնին սկզբանց հետ:

Նաւիրապետութիւնը Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հիւսքանչ

գործերուն ամենագեղեցիկն է. մեր պատմութեան ամենէն վեհ և ազդեցիկ և յուզիչ տեսարաններէն մին է: Եկեղեցական Նուիրապետութիւնը մեծապէս ընդարձակ նիւթ մըն է, և այժմու ժամանակիս մէջ բացառաբար կարևոր է, տիրող նորերուկ մոլորութեանց պատճառաւ:

Քարոզիչը գեղեցիկ վերլուծումով և իմաստասիրական բնազանցութեան խորաթափանց հետազօտութեամբ մը ի վեր կը հանէ Արդիականութեան անեղ վնասներն, որ կ'ուզէ փայլուն ոճերով և առերևոյթ կրօնքով, եկեղեցին հիմն ի վեր տապալել, Նուիրապետութեան արմատին զարնելով կոցինը: Հետևաբար ի Հոգւոյն Սրբոյ դրուած Հովիւներու պարտքն է իւրինց իշխանական հեղինակաւոր ձայնը բարձրացնել Քրիստոսի հօտը բզքտող գայլերու դէմ. նոր հերետիկոսութեան մոլորական և հայհոյիչ խօսքերուն դէմ՝ ճշմարտութեան գեղեցիկ և լուսարձակ խօսքերը դիմադրել իրենց հաւատքի խանդով. երկնից ու երկրի առջև՝ աստուածային հրաշակել եկեղեցւոյ ծագումը, աստուածային՝ իր վարդապետութիւնները, աստուածային՝ իւր գործարանաւոր հաստատութիւնը, աստուածային՝ իւր հիմնալի Նուիրապետութեան կազմութիւնը: Հռչակէ՞ն զայն ինչպէս որ կ'ամիցու իւր հաստիչն Աստուած, և ո՛չ ինչպէս այն անօրէն և խռովաբար մարդիկն որ փորձ կը փորձեն մատնիչօրէն ստրկացնել զայն: Ազատ ու բարերարը մարդկութեան, պիտի տեսէ այն մինչև դարերու վերջը, անսխալ վարդապետութեամբ ուսուցանելով՝ իւր երկնաւոր վարդապետին խօսքերուն համաձայն և Անոր ընթերակացութեամբ: Աստի է հաւատացելոց անհրաժեշտ պարտքը՝ լսելու և հնազանդելու իրենց հովիւներուն, և անոնց սորվեցուցած բաներն ընդունելու իբրև Քրիստոսի խօսքերը:

Նուիրապետութեան կարգն ալ Քրիստոս Տէրն մեր հարկաւորաբար և աստուածային իմաստութեամբ հաստատեց, ամենափոքր աստիճանէն մինչև ամենաբարձրը. հաւատոյ սրբազան աւանդը անվթար պահպանելու, մարդիկները շնորհքներով լիացնելու և փրկութեան հասցնելու համար: Հիմնալի կերպով կազմուած մարմինն է Քրիստոսի, որոյ երևելի Գլուին է Անոր Փոխանորդը Պետրոս և իր Յաջորդն Սրբազան Քահանայապետը. զի Պետրոսի ըսաւ Տէրն. « Ես պիտի աղօթեմ քեզի համար, որպէս զի քու հաւատքդ չպակսի »: Այս է այն երկնաւոր սեղանը որ Աստուծոյ որդւոց կ'ապահովէ անթարշամ պատանդութիւն, և ուր Հոգին Սուրբ կը բեղաձնուորէ հոգիներու եռանդն: Հոգւոց մեծ ընկերութիւնն է այս, Սրբոց հաղորդութիւնը, փրկութեան փարսը, փոթորկէն վերջը նաւահանգիստ փրկութեան:

Սակայն Արդիանականութիւնը տեսականէն աւելի գործնականին մէջ զարհուրելի արդիւնքներ յառաջ կը բերէ. տնոր սկզբնական առածն է՝ « Ազատագրութիւն յեկեղեցական իշխանութենէ » . և որովհետեւ ամենուն մատչելի է՝ և մարդկեղէն տկար բնութեան ապստամբական գրեթէ քնածին զգացմունքին հաճելի, անոր համար ժողովրդականացաւ և կերպով մը ընդհանրացաւ :

Նոսե, ըսաւ, ձեր փառաւոր Հայաստանին մէջ այսօր դժբախտարար յայտ կուգայ անհնազանդ հետաութեան ոգին : Աշխարհական տարրը, հնար է շատ կրօնասէր ըլլալով հանգերձ, իր հովիւներուն հայրական վարչութեան դժուարաւ կը հանգաւթէ : և որ չարագոյնն է, յանուն իրաւանց, կը խառնէ Եկեղեցւոյ դաշտին մէջ և ձեր հովուական պաշտաման գործադրութեանը խնչընդոսներ կը յարուցանէ : Բայց պէտք է գիտնան ամէնքն որ Քրիստոս ո՛չ ժողովրդեան՝ այլ միայն Հովիւներուն տուաւ սորվեցնելու և կառավարելու իշխանութիւնը : Ո՛չ ինչ կարելի է զիջողութիւն ընել այս աստուածային անյեղլի իրաւանց մէջ, որուն Եպիսկոպոսներն միայն աւանդապահ են :

Ապա եռանդնաբարբոք յորդոր կարգաց Սինոդականներու՝ զգենիւ Քրիստոսի զօրութիւնը, անրիժ և անվթար պահելու համար այս աւանդը, նմանելով իրենց սուրբ Հարց, որոնք իբրեւ քաջ հովիւ իրենց անձերն իսկ զոհեցին վասն Սուրբ Եկեղեցւոյ : Որով յառաջ պիտի գայ ժողովրդեան և Հովուաց փրկարար միութիւնը ըստ խոստման Փրկչին, և ի բաց պիտի դառնայ Աստուծոյ սպառնալից պատիժը այդ միութիւնը պառակտողներուն և Եկեղեցւոյ վրայ անիրաւ յարձակումներ գործողներուն դէմ :

Քարոզէն վերջը ժողովուրդը և միւս ներկայք ելան Եկեղեցիէն, որոյ դռները գոցուեցան : Եւ Սիւնհագոսը շարունակեց իւր Նիստը, որ աւարտեցաւ ի 12 ու կէս :

*
*
*

Նոր օծեալ Եպիսկոպոսաց, ինչպէս նոսե վերջէն հասնողներուն, մասնաւոր Ունկնդրութիւն չնորհեց Սրբազան Քաջանայապետը, ամսոյս 10, առաւօտեան ժամը 10 ին : Ըստ իւր գթառատ սովորութեան հայրական սիրալիր խօսքեր ուղղեց ամենուն, յորդորեց և կազդուրեց իրենց պաշտաման ոգւով չափ փարելու և աշխատելու ի փրկութիւն հոգւոյ : Ամէնքն ալ լի մխիթարութեամբ և զոհունակութեամբ մեկնեցան :

ՆՈՐԱՆՏԻ ԵՊԻՍԿՈՍՈՍԱՅ ՀԱՆՐԱՊ

ԻՐԵՆՑ ԹԵՄԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ

1. Կարևոյ (Երզնում) Վարչական Ժողովոյ կողմանէ հասած է հետեւեալ շնորհաւորական հեռագիրը.

Collège Arménien,

Monseigneur Melchisédech

Rome

Félicitations chaleureuses. veuillez présenter vives reconnaissances Patriarche Terzian.

Conseil Catholique Erzeroum

Paklarian

Հայ Դպրոց

Արհիպատիւ Մելքիսեդեկեան

Հռոմ

« Խանդավառ շնորհաւորութիւններ: Հաճեցէք մեր սրտագին շնորհակալութիւնները մատուցանել Թէրզեան Պատրիարքի »:

(յանուն) Էրզրումի Կաթողիկէ Ժողովոյն

Բաքլարեան

2. Անկիւրիոյ Գեղ. Փոխամուրդը եւ Վարչական Ժողովոյ Նախագահը հետեւեալ հեռագիրը կու տայ.

Monseigneur Grégoire Bahaban

31 S. Nicola Tolentino

Roma

Félicite chaleureusement votre Sacre, demande Bénédiction.

Poladian

Արհիպատիւ Գրիգոր Եպ. Պահպանեան

31 Ս. Նիկողայոս Տոլենտինեան

Հռոմ

« Ջերմագինս կը շնորհաւորէ Ձեր Օծումը եւ կը խնդրէ Օրհնութիւն »

Բօլաթեան

Նոյնպէս հետեւեալ նախալը հասած է յԱնկիւրիոյ.

Վեհափառ եւ Գերեզմանիկ Հոգեւոր Տէր

Ձեր Սրբութեան 15 Հոկտ. թուակիր աւետարեր գրութիւնը թէև քիչ մը ուշ ստանալով՝ բովանդակութեանը մեծ ուրախութեամբ տեղեկացած՝ և թէ՛ կղերին թէ՛ առաջաւորաց թեմիս անոր պարունակութիւնը անպաշտօն կերպով հաղորդած ըլլալով, անհամբեր կը սպասէի Ձեր ծանուցած պաշտօնական կոնդակին՝ որ այս օրերս ձեռքս հասաւ, և ես փութացի նոյնհետայն կղերը հաւաքելով հաղորդել իրեն անոր ամբողջ պարունակութիւնը, և զոր տաճկերէնի թարգմանելով շատ մօտ օրէն կարգաւ պիտի տամ յեկեղեցւոյ ի լուր ժողովրդեան:

Այդ ուրախալի և պատշաճ կարգադրութիւնը, Հոգեւոր Տէր, մեր ամենուն սիրտը խնդութեամբ լեցուց և շուարած ենք ըստ պատշաճի արտայայտելու մեր խորին և երախտագէտ շնորհակալութիւնը, նախ՝ մեր ամենուն բարեգութ Հօյրը Սրբազան Պիոս Ժ. Քահանայապետին, որ Ձեր հոգածու միջնորդութեամբ հաճեր է իւր հայրական ակնարկը դարձնել նաև մեր այրխացեալ Անկիւրիոյ թեմին վրայ, և ինքն անձամբ արժանաւոր Հովիւ մը կարգել յանձին Արհիապ. Պահապանեան Գրիգոր Եպիսկոպոսին, որ իւր գովելի բարեմասնութեամբ մեր ամենուն ծանօթ, յարգելի և հաճելի անձնաւորութիւն մի է: Երկրորդ՝ նաև Ձեր սրբութեան աջութիւնը խնամոց կը պարտինք, Հոգեւոր Տէր, այդ ուրախալի կարգադրութեան այսպէս հեշտեալ ի յանդ ելլելը. Դուք որ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռոյն վրայ բարձրանալէն ի վեր անխնայ և անդուլ աշխատեցաք ըստ արժանոյն խնամելու Ձեզ յանձնեալ ամբողջ Հառարակութիւնը, անոր վրայ հսկելով, ուսուցանելով և մօլորելու մեծաւոր վտանգին մէջ եղողները յազդութիւն ածել ջանալով: Ոյր վասն մեր երախտապարտ շնորհակալութեան խորին զգացմունքները Ձեր Սրբութեան մատուցանելով, կը շարունակենք ջերմաջերմ մողթանքներ վերառաքել առ Մեծ Քահանայապետն Յիսուս, որ հաճի, ինչպէս մինչև ցարդ, յայսմհետէ ևս Ձեզ զօրովիզն օգնական լինել յաջողութեամբ պսակելով Ձեր՝ եկեղեցւոյս և ազգիս օգտակար ամէն ձեռնարկներն՝ ի պայծառութիւն սրբոյ Կրօնիս:

Ահա, այսպէս, Հոգևոր Տէր, հակիրճ բանիւք թարգման հանդիսանալով Անկիւրիոյ կղերին և հաւատացելոց առ հասարակ՝ շնորհակալու զգացմանց, խոնարհաբար կը խնդրենք որ հաճիք, առթիւ մը, ներկայացնել ևս զանոնք յոտս մեր սիրեցեալ և պաշտելի Սրբազան Հօր Պիոս Ժ. հայասէր Քահանայապետին, հրաւիրելով իւր հոգևոր և հեռաւոր զաւակացը վրայ իւր առաքելական Օրհնութիւնը:

Այսպիսի զգացմամբ տոգորեալ՝ կը մատչիմ, Հոգևոր Տէր, ի համբոյր Ձեր Ս. Աջոյն և խնդրելով Ձեր Հայրապետական Օրհնութիւնը, մնամ խորին մեծարանօք

Վերհափառ և Գերերջանիկ Հոգևոր Տեսուչ

Ամենախոնարհ Ծառայ և

Ամենահնազանդ Որդի

Յովհաննէս Ծ. Վ. Բօլաթեան

Եպիսկոպոսական Փոխանորդ

3. Եզիպտոսէն հասած է հետեւեալ նախակը.

Առ Ամենապատիւ Գերերջանիկ Հոգևոր Տէր

Տէր Պօղոս Պետրոս ԺԳ. Թերզեան

Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ

ի Հռոմ

Գահիրէ 7 Նոյեմբեր 1914

Ամենապատիւ Գերերջանիկ Հոգևոր Տէր.

Պատիւ ունիմ յայտարարելու թէ ընդունեցայ Ձեր Կոնդակն նկատմամբ Արհի. Գուգեան Վ.ի եպիսկոպոսացման Ազեքսանդրիոյ թեմին. հաւատելով անցելոյ Ձա թուակիր գրութիւնքս Ձեր Ս. Օծութեան և Նորին Արհի. Տէրութեան:

Ներկայիս առաջին օրն հրաւիրեցի տեղւոյս Մեծամեծներն, որոց՝ ի ներկայութեան արգոյ կղերին, կարգացինք, ի գլխավորութիւն իրենց՝ նախընթացարոր գաղղիերէնի թարգմանուած և պատրաստուած Կոնդակն, և յաւարտ, համառօտ խօսքով կոչ իրենց բարի հաւատացեալի պարտուպատշաճ սկզբունքներու և կաթողիկէականի բարի տրամադրութիւններու:

Մեծաւ հաճութեամբ կը ծանուցանեմ որ Կոնդակն ուշի ուշով և յար-

զանօք լսուեցաւ ի ժողովի, որ գովելի կերպով հաւաստեց իւր խորին հպատակութիւնը մեր Վեհաշուք Սրբազան Հայր Պիոս Ժ. ի Անձամբ տնգրինած արտասովոր կարգադրութիւններուն: Նիստին քացզւմն և փակումը կարճ ազօթքով կնքուեցան:

Նոյն Կոնգակն երէկ խաւրեցի յԱղեքսանդրիա՝ հաղորդելու ի գիտութիւն նոյն տեղի Հասարակութեան:


Յռանդպգին մաղթանքը պայծառութեան Ս. Եկեղեցւոյ և քարգուլածման մեր փոքր սիւղի Հասարակութեան, հայցմամբ աստուածաւանդ Ս. Օրհնութեանդ մնամ

Ամենապ. Գերերջանիկ Հոգևոր Տէրութեանդ

Խ. Մ.

Գ. Վ. Գառպարեան

Ընդհ. Փխնդ. Եգիպտոսի



ՌԱՀԱՆԱԶԱՊԵՏԻ ԱՆՍԻՄԱԼՈՒԹԻՒՆ ՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

« ԾՇՄԱՐԻՏ ԿԱԹՈՂԻԿԷ » ի

պատմական մը

(Շարնակութիւն)

Բայց քանի որ միայն հաւատքի սկզբունք եղող բարեկարգանին մէջ է որ Քահանայապետն յԱթոռոյ կը խօսի և է անսխալ, բաւական չէ՞ր պահել Վատիկանեան ժողովոյ բառերն՝ ի հպաշտոյս եւ ի քարոյս միայն զնելով անսխալականութեան տարածութիւնը: Մոլար և մոլորեցուցիչ իմաստակութեան մը առջև ուղղւած էր առնուլ այդ որոշ, մեկին ու բացատրիչ յաւելումով: Նոյն իսկ կաթոլիկ ըսուողներ, որ միւս կողմանէ կ'ոտնակոխէին կաթոլիկ Եկեղեցւոյ կազմակերպութեան հիմնական սկզբունքներն, կը գոռային թէ մենք հաւատքի դէմ չենք գործեր, ո՛չ Երոտրոսքիսն եւ ո՛չ մարդեղոսքիսն կ'ուրանակ, իբրեւ թէ հաւատքի առարկայ ու մասն ըլլային միայն տեսական ու վերացական խորհուրդներ, և չըլլային հաւաստարարէս հաւատքի մասն այն գործնական սկզբունքներն, որոնց

դէմ կը մաքառէին, որոնք կաթողիկէ Եկեղեցւոյ բարեկարգութեան հիմերն են, առանց որոյ կաթողիկէ Եկեղեցին չի կրնար կաթողիկէ մնալ: Ուստի առանց դէմ հարկ էր որոշ ու բացայայտ սկզբունք մը դնել, հասկցնել որ Քահանայապետն բարեկարգականի մէջ ալ կրնայ յԱթոռոյ խօսիլ, և երբ յԱթոռոյ խօսի այս նիւթին մէջ ալ անսխալ է. հետեւորար հաւատքի և բարոյից մէջէն դուրս ձգել չըլլար այդ բարեկարգականը: Երկդիմի, երկլեզու ըլլալը վնասակար է. Ժողովուրդը խաբել ոճիր մ'է, մթազնել ու կեղծեաց տակ ձգել հաւատքը՝ որրապղծութիւն է. ընդհակառակն որոշ ու յստակ ըլլալ այս փափուկ նիւթերու մէջ ամէն ճշմարիտ կաթողիկէի պարտքն է:

Բայց քահանայապետն և տիեզերական ժողովներ խօսած են երբեք և կրնան խօսիլ բարեկարգականի մէջ ալ ՅԱԹՈՌՈՅ: Ասոր պատասխանէ՝ նոյն իսկ Վատիկանեան ժողովը և նոյն ինք Քահանայապետի Գերիշխանութեան և անսխալականութեան վճիռն, որ գերազանցօրէն բարեկարգական ու հիմնապէս Եկեղեցւոյ կազմակերպութիւնն զանգոյ սկզբունք մի է: Բայց յիշենք ինչ ինչ բարեկարգական կէտեր, որոնք հաւատքի սկզբունք են. ՚ի հաւատոց է թէ Քահանայապետն Հռովմայ անմիջական իրաւաբանութիւն ունի ընդհանուր և մէն մի Եկեղեցւոյ վրայ, որ ըսել է կրնայ օրէնդրել, միջամտել իւրաքանչիւր գաւառներու, թեմերու գործոց մէջ և հոն սահմանել նոր կարգադրութիւններ, չնչն ու վտարել անկարգութիւններ, դատապարտել մոլորութիւններ և մոլոր կարծիքներ, վերցընել սովորութիւններ, անոնց ակնդ հաստատել նոր օրէնքներ ևն, ո՞վ չիտեսներ թէ այս կաթողիկէ հաւատքի անտարակուսելի սկզբունքը ամբողջովին, իսկովին բարեկարգական է միանգամայն և այս յԱթոռոյ վճռած է Վատիկանեան ժողովը: Ի հաւատոց է թէ Եպիսկոպոսներն յԱստուածային իրաւանց ունին իրաւաբանութիւն իրենց վիճակաց վրայ, թէ ունոնք կարգաւոր հովիւներ են, զորս Հոգին Սուրբ գրած է հովուելու և արածելու Քրիստոսի հօտին մէկ մասնակի փարախը. հետեւորար ՚ի հաւատոց է դարձեալ թէ Եպիսկոպոսաց իշխանութիւնը ժողովրդէն չի բղխիր իբրև թէ Աստուած ուղղակի ժողովրդեան տուած ըլլայ իշխանութիւնը և ժողովրդէն հովուաց հաղորդուի. ասոր ներհակ ո՛ր և է կարծիք ու զրոյց հերետիկոսական է. « *propositio, quae statuit, potestatem a Deo datam Ecclesiae ut communicaretur Pastoribus, qui sunt eius ministri pro salute animarum, sic intellecta, ut a communitate fidelium in Pastores derivetur ecclesiastici ministerii ac re-*

giminis potestas: est haeretica » (Pius VI Const. Apost. Auctorem fidei, prop. 2): Թարգմանենք. Այն նախադասութիւնը, որ կը սահմանէ, թէ Աստուծմէ Եկեղեցւոյ տրուած իշխանութիւնը, որպէսզի նա հովիւնէր, որ հաղորդուէր, որոնք հոգւոց փրկութեան համար Անոր պաշտօնականներն են, այսպէս ընթողուած՝ իբրեւ թէ հաւատացիոց բազմութենէն կ'անցնի առ Հովիւն եկեղեցական պաշտաման ու վարչութեան իշխանութիւնը. հերետիկոսական է: (Պիոս Զ.): Ո՞վ չտեսներ թէ այս կաթողիկէ հաւատքի անվիճելի սկզբունքը ամենաշօշափելի գործնականութիւն ունի բարեկարգականի մէջ: Անվերջնալի պիտի ըլլար այս տեսակ սկզբունքներու շարքը, եթէ ուզէինք մի առ մի հաշուել. տիեզերական ժողովներն, քահանայապետաց թուղթեր կը վճռեն յԱթոռոյ անթիւ նման խնդիրներ, որոնց առջև ճշմարիտ կաթողիկէն պէտք է որ հաւատքով և հնազանդութեամբ հպատակի:

Այս իմաստով կը գրէր Պիոս Թ. իր 9 նոյեմ. 1846 ի կանդակին մէջ.

Մարդկային բանականութիւնը.... ամէն դժուարութիւն և տարակոյս ամբողջովին մէկգի զննելով և մերժելով՝ պարտաւոր է կատարեալ հպատակութիւն հաւատքի, երբ ստոյգ գիտէ թէ Աստուծմէ աւանդուած է ինչ որ հաւատքը մարդկանց կ'առաջարկէ հաւատալու և ԳՈՐԾԵԼՈՒ համար.

Humana ratio..... quavis difficultate ac dubitatione penitus abiecta atque remota omne eidem fidei obsequium praebeat oportet, cum pro certo habeat, a Deo traditum esse quidquid fides ipsa hominibus credendum et AGENDUM proponit (Pius IX. in Enc. 9. Nov. 1846)

Ուր agendum գործելու բառը առ հասարակ կը նշանակէ բարեկարգականն ալ որուն համար կը գրուէր այդ կոնդակը:

Շարունակելի



ԹԵՄԵՐՈՒ ԶԱԹՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Առ Ամենապատիւ Գերեքսանեկ Հոգեւոր Տէր

Տէր Պօղոս Պէտրոս ԺԳ, Թերզեան

Կարողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ

ի Հռոմ

Պատրիարքութեանդ հպատակ Սեբաստիոյ թեմէն՝ երկգարէ 'ի վեր կաթողիկէութիւնը անաղարտ պահող Կիւրինի աղքատիկ ժողովուրդը՝ կուգայ սոյն հանրագրութեամբ յուզումնալից արցունքներ թափել յստա Հայրապետական Ս. Աթոռոյդ, առթիւ՝ Կ Պոլսոյ երեսփոխանական ժողովոյ 28 մայիս 1911 թուակիր պաշտօնական յայտարարագրին մէջ, Ձեր անդրանիկ Հովուականին հակառակ սպրդուած նախադասութեանց « նախատականին — հակազգային — խաբէական թերագրութեանց և այլն » յանուն ուղղափառութեան ներուժ և անյիշարութիւն կը խնդրենք:

Մենք՝ մեր խղճի կոչումով հրապարակաւ կը խոստովանինք, թէ՛ այն բոլոր ժողովք — գրութիւնք և ձեռնարկներ, որք՝ հակակաթողիկէ են և Հռովմայ Ս. Գահին դէմ ըմբոստութիւն կը սպառնան, դատապարտելի է յաչա մեր, և անվիճելի է մեր վստահութիւն ու հնազանդութիւն Կաթողիկէ Նուիրապետութեան և անրաժան ենք ու պիտի ըլլանք ցկեանս:

Այս, ո՛չ միայն հաւատոյ դաւանութիւն մ'է, այլ և ճանչցած ենք և պիտի ճանչնանք զՁեզ բազմեալ ի Ս. Աթոռն Լուսաւորչի Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ, ինչպէս նաև Արհի. Վիճակաւորն մեր Լեւոն Ալք-հայկոպոս Բէշէճէան յաթոռն Ս. Վլասայ և բոլոր թեմական Ս. Հարք իւրեանց պսակեալ սահմանին մէջ:

Ազգային բարեկարգութեանց մասին, որոնք որ չփուժ ունեցած են և կ'ունենան մեր Ս. կրօնքին և հաւատոյ կեդրոնին, միամիտ և միասիրտ հպատակութեամբ կապուած ենք 'ի հնազանդութիւն, և Ձեր Սրբազան անձին դեռ լրագրաց մէջ տնտեսած նախատական գրուածքը, հովուական կոնդակդ մերժուած կամ պատուուած ըլլալու յանդգնութիւնը, և երեսփոխանական ժողովոյ կողմէ Ազգային իրաւանց պաշտպանութեան դիմակին տակ խաղցուած արարքները, կը մերժենք և կը բողոքենք:

Իսկ՝ տեղային ելեմտից մատակարարական մասին ալ կը հերքինք
երեսփոխանական ժողովոյ ազատօրէն գործելու հակոթաթողիկէ գաղափար-
ները, և ցարդ հրամանաւ Արհի. Թեմականին Ազգէս քուէարկուած վար-
չական ժողովով և Գեր. փոխանորդաց նախագահութեամբ կառավարուած
մատակարարութիւնը օգտակար և ուրդիւնաւոր գտնելով, սոյն կերպին
յարատեութեան պաշտպանութիւնը կը թողունք Ձեր Սրբազնութեան և
սինոդհոսական Ս. Հարց: — Հռնկ ուրեմն մատչելով՝ ի համարոյ Ս. Քղանց-
քիդ և հայցելով աստուածային և հայրապետական Ա. օրհնութիւնդ,
Եմք և մնամք Ամենապատիւ Գերերջ. Հոգեւոր Տեսունդ

Նուաւստ Ծառայք

Հոյ — Կաթողիկէ Ժողովո՛րդ Կիւրնոյ

Յարութիւն Թօփիկեան — Յարութիւն Կերկերեան — Սիմօն Կերկերեան
Յովսէփ Գարատէրեան — Դրիգոր Կերկերեան — Գաբրիէլ Թէրճանեան
Աբրահամ Հիւրմիւզեան — Թորոս Խէնկիկեան — Դրիգոր Չէրշեան
Յովակիմ Տէվէճեան — Պետրոս Կերկերեան — Թորոս Թէրճանեան
Թորոս Աղաղարեան — Յարութիւն Տէվէճեան — Մկրտիչ Մ. Թէրճանեան
Ն. Իշխանեան — Յարութիւն Տէվէճեան — Յարութիւն պ. Կերկերեան
Կարապետ Հիւրմիւզեան — Ղևոնդ Թէրճանեան — Սարգիս Խնիկեան
Յովսէփ Զօնտալեան — Արամ Թահմազեան — Դրիգոր պ. Կերկերեան
Պետրոս Թէրճանեան — Թօլիկ Թէրճանեան — Յովսէփ Տէմիրճեան
Թորոս Կերկերեան — Պետրոս Հիւրմիւզեան — Յակօր Հէքիմեան
Թադել Թէրճանեան — Կարապետ Թէրճանեան — Խաչատուր Կարապետեան
Յովսէփ Զ. Կերկերեան — Սիմօն Պայրաֆչեան — Յովհաննէս Սղէքսանդրեան
Յովհաննէս Հէքիմեան — Պետրոս Արապեան — Յովսէփ Քէլկարապետեան
Խաչէր Կապուեան — Պօղոս Յ. Տէվէճեան — Մանուկ Ալանաճրեան
Յովսէփ Աղէքսանդրեան — Յովսէփ Տ. Աղէքսանդրեան — Պօղոս Աղէքսանդրեան
Աթանաս Աղէքսանդրեան — Դրիգոր Քէլկարապետեան.

Հաստատեմ և հաւատեմ եթէ ի վերոյ եղեալ ստորագրութիւնք իւրեանց տեսն
են և միմեզմայն առաջաւորք մեծամասնութիւնն կազմեն և յանուն Կիւրնոյ հա-
նուր ժողովըրդեան ստորագրեալ են:

Կիւրին 28 Սեպտ. 1911

Դրիգոր Վ. Փենիխանեան
Ժողովրդապետ Կիւրնոյ

Փ. Պիսեֆի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Պատրիարքական Սինոդոս ի Հոռիմ	ky 265
Նորընթիւ Եպիսկոպոսաց հանդէպ իրենց քեւեւուն վերաբերումը . . .	» 269
Քահանայապետի Անկախութիւն և Բարեկարգութիւն	» 272
Թեմերու Զայնակցութիւն Կարողիկոսական Տրանսդրոքեանց	» 275



ROMA — PIAZZA CAMPO MARZIO, 6 — ROMA

ԲԱՐԻՁԻ ԵՂԲԱՐԻՔ

Pontificia Fabbrica di Candele da Chiesa e Lumini da notte senza olio.


Candele speciali per la esportazione

Fornitori dell'Arcibasilica Lateranense, della Basilica Vaticana e di tutte le altre principali Basiliche e Chiese di Roma e d'Italia.

Esportazione in tutti i principali porti del mondo dove la Ditta spedisce la merce franca d'ogni spesa.

E' il più grandioso stabilimento che siasi dedicato esclusivamente alla fabbricazione di Candele per il culto.

Քահանայապետական Գործարան
Մոմեղինաց ի պէտս եկեղեցեաց կը
պատրաստուին կանթեղք գիշերոյ ա-
ռանց իւրի կը շինուին յատուկ մոմե-
ղէնք արտածութեան համար.
Հայթայթիչք Լատերանեան աւագ
Մայր եկեղեցւոյ և Վատիկանեան Մայր
եկեղեցւոյ.
յիտալիա և ի Հռովմ գտնուած միւս
բոլոր աւագ և գլխաւոր եկեղեցեաց
Ընկերութիւնա աշխարհիս ամէն գըլ-
խաւոր նաւահանգիստներուն արդանք
կը ղրկէ՝ ծախքն իր վրայ. Ամենամեծ
Գործարանն է, որ միայն ի պէտս ե-
կեղեցւոյ մոմեղինաց շինութեան կը
պարապի:



OTTICO

ROMA — CORSO UMBERTO I, 412 (Palazzo Fiano) — ROMA

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԲՐԻՃԴԻՐԻ

Grand assortiment en jumelles pour theatre, campagne et marine.

Jumelles prismatiques de la maison Zeiss.

Verres cylindriques, prismatiques et combinés.

On exécute toutes sortes d'ordonnances des MM. les Professeurs oculistes.

Կը վաճառէ ածան դնով ամէն տե-
սակ դիտակներ թատրոնի, դաշտի և
ծովու համար
Ունի երկաշեայ դիտակք հատուա-
ծակողմ ապակիով ծախս Գործարանէն
և Ապակիչներ գլանացեւ, հատուածա-
կողմ և զուգեալք.
Կը կատարուին ամենայն ճշտու-
թեամբ որ և է յանձնարարութիւնք
ՊՊ. ակնարուսից.

ՐՕՏԱ. ԶԱՆԱԶՅՈՒ Ե. Ը.

FORNITORI DI SUA SANTITÀ

ROMA — VIA BORGO NUOVO N. 96 — ROMA

ՐՕՐԱ ԾԱՆԾԱԾՈՒ ԵՒ ԸՆԿԵՐԻ

Fabbrica di Statue Religiose in
qualsiasi materia e dimensione

Invio di Listini, fotografie e pre-
ventivi

Gratis a richiesta

Per telegrammi: Statue — Roma.

Սուրբ Արձաններու

Գործարան

Ամէն տեսակ նիւթէ

և մեծութենէ պատրաստուած

Արձաններու

ցուցակն և լուսանկարն

խնդրողին ձրի կը պահուի



Guglielmo Gandrugi

ROMA

PIAZZA TOR SANGUIGNA N. 2-3 — VIA CORONARI N. 1

ԿՈՒՆԻԷՐԱԾՈՒ ԿՈՒՄԻՏԵՆԵՐ

GRAND ASSORTIMENT

Chapelets, Medailles, Reliquaires

Livres de dévotion

et autres articles de religion

Oleographies

MOSAÏQUES ET CAMÉES

Objets des Beaux Arts

Cadres, Bijouteries, Photographies

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Վարդարան, միտակ, մասունքի աման

աղօթագրքեր

ուրիշ ջերմեւանդական առարկայներ

մեծ իւզատիպ պատկերներ

ՄՕՐԱԻԳ

Գեղարուեստական նիւթեր

նկարներ, գոհարեղէնք, լուսանկարներ